ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1962 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

1962 մարտի 13-ին և 14-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական սեսիան՝ նվիրված 1961 թ. դաշտային արշավախմբերի աշխատանքների արդյունքներին։

Բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Ա. Կարինյանի բացման խոսքից հետո, որում ընդգծվեց հնագիտության դերը պատմական անցյալի ուսումնասիրության գործում, Գառնիի հնագիտական դաշտային աշխատանքների մասին հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ արշավախմբի պետ՝ Բ. Ն. Առաքելյանը։

Կանգ առնելով Գառնիի ամրոցի կենտրոնական մասում կատարված պեղումների արդյունքների վրա, Նա նշեց, որ հայտնաբերված նյութերը վկայում են Էնեոլիթյան բնակավայրի երկարատև կյանքի մասին։ Նյութերն ապացուցում են, որ տեղերում ձուլվել են մետաղյա զանազան իրեր։

Հնագիտական շերտագրության և կուլտուրաների հաջորդական անցումների և ժամանակագրության լուսաբանման տեսակետից խոշոր նշանակություն են ունեցել ամրոցի արևելյան եզրին՝ պարսպի տակ կատարված պեղումները, որի ամենաստորին շերտում հայտնաբերվել է Էնեոլիթ, որին հաջորդել են բրոնզեդարյան շերտը, վաղ հայկական շերտը, (որը դեռ սակավաթիվ նյութերով է հայտնի), անտիկ շերտը և միջնադարյան շերտերը։

Զեկուցողը նշեց, որ մեծ բանակությամբ հնձանների առկայությունը և այդիների ու գինու վաճառքի հիշատակությունները Գառնիի արձանագրությունների մեջ, վկայում են, որ Գառնին եղել է խաղողագործության ու գինեգործության աչքի ընկնող վայրերից մեկը։

Գառնիի 1961 թ. պեղումների նշանավոր արդյունքներից է տեղամասի հյուսիսային հատվածում գտնված պահվավերեն արձանագրությունը, որի նախնական ընթերցանությունից պարզվում է, որ արձանագրությունը թողել է հայոց Վաղարշակ թագավորի որդին։ Հիշյալ արձանագրությունը շատ կարևոր վավերական է հայ արշակունիների թագավորության ժառանգական դառնալու և դրա ժամանակի վերաբերյալ։

Գառնիի ամրոցի պեղումների շնորհիվ պարզվում է ամրոցի հրապարակի և նրա վրա գտնվող զղյակային կոմպլեքսի մոտավոր պատկերը։ Այն թույլ է տալիս որոշ դաղափար կազմելու հին Հայաստանի քաղաքների ֆորումների մասին։ Ինչպես մեծ քաղաքներում, Գառնիում, առավել ևս հրապարակների վրա, գտնվում էին հասարակական և պալատական շենքերի կոմպլեքսները։

Դամբարանների պեղումներից, տարբեր իրերի հետ, գտնվել է երկաթե մեկ սուր, որն անտիկ շրջանի սրի առաջին դյուտն է Հայաստանում։

Զեկուցողը վերջում ընդգծեց, որ Գառնիի պեղումների արդյունքները կարևոր ներդրում են Հին Հայաստանի պատմության և նյութական մշակույթի ուսումնասիրության բնագավառում։

Հացավանի և Փարաքարի պեղումների մասին զեկուցեց Գ. Տիրացյանը՝ մանրամասն նկարագրելով Հացավան գյուղի մի բարձունքի վրա տեղավորված ամրոցը։

Ամրոցը ծառայել է իբրև զորական՝ դեպի Արարատյան դաշտը տանող ճանապարհի վրա։ Ամրոցի պեղումներից հայտնաբերվել են հնագիտական արժեք ներկայացնող շատ իրեր։

Խոսելով Փարաքարում կատարված պեղումների մասին, զեկուցողը նշեց այնտեղ հայտնաբերված դրամների մասին, որոնք վկայում են, որ Փարաքարի այդ իսկ շինությունն հուշարձանը վերաբերում է մ. թ. ա. 2-րդ և 1-ին դարերին։

Թեյշեբաինի 1959—61 թթ. պեղումների արդյունքների մասին զեկուցեց արշավախմբի ղեկավար Հ. Մարտիրոսյանը։

Տալով ուրարտական խոշորագույն կենտրոններից մեկի՝ Թեյշեբաինի քաղաքի բնակելի թաղամասի պեղումների պատկերը, զեկուցողը

մանրամասն կանգ առավ Թեյշեբաինի հարավ-արևմտյան մասում հայտնաբերված 6 հսկայական շինությունների մնացորդների վրա, որոնք այլ թաղամասերի բնակելի տներից տարբերվում են իրենց ներքին հատակագծով, արտաքին ձևավորմամբ ու տեսքով։ Զեկուցողը նշեց, որ այս թաղամասը հանդիսացել է քաղաքի կարևոր մասերից մեկը և պատկանել է ռազմաստրկատիրական և տոհմական ավագանուն։ Քաղաքի այս մասում պեղվող մեծ շինություններից մեկը գրավում է ավելի քան 2000 քառ. մ. տարածություն, բաղկացած է 4 իցենտիկ սեկցիաներից, որոնցից յուրաքանչյուրն ունի 10 սենյակ։

Զեկուցողը վերջում եզրակացրեց, որ ընդհանուր առմամբ Թեյշեբաինի քաղաքը հարեևման է Ասորեստանի այն քաղաքներին, որոնք կառուցվում էին շատ կարճ ժամանակվա ընթացքում, թագավորների հրամանով, որպես ժամանակավոր նստատեղիներ։

Էրեբունի ամրոցի պեղումների մասին զեկուցեց Կ. Լ. Հովհաննիսյանը։ Նա հատկապես կանգ առավ Արինբերդում, 1961 թ. ընթացքում, պեղված մի մեծածավալ շենքի վրա, որի ընդհանուր մակերեսը կազմում է 1200 քառ. մ։

Պեղվող շենքը ուրարտական ճարտարապետության հետաքրքրական կառուցվածքներից է, և նրա պատի վրա գտնված սեպագիր արձանագրության մեջ անվանված է Արե-հացահատիկ շտեմարան՝ ըստ Գ. Ա. Մելիքիշվիլու վերծանության։ Շենքը կանգնած է միջնաբերդի գլխավոր հրապարակի վրա, խալդ աստծո տաճարի դիմաց։

Ելնելով շենքի եզրագծից, զեկուցողը եզրակացնում է, որ Արին առանձին շենք է և միայն հյուսիս-արևմտյան մասով է ընդհուպ կպած պալատին։ Բացված վեց սենյակներից ոչ մեկը՝ այն շտեմարան լինելը հաստատող որոշակի հնագիտական նյութ դեռ չեն տվել, որպիսի հանգամանքը կասկածելի է դարձնում նրա շտեմարան լինելը։

Զեկուցման մեջ ուշադրություն էր դարձված նաև ուրարտական ճարտարապետական մի այլ կարևոր կոթողի, Թեյշեբաինի քաղաքում պեղված մի բնակելի թաղամասի մեծածավալ շենքի ճարտարապետական ձևի վրա, որում նա տեսնում է հանրահայտ Մեգարոն կառուցվածքը՝ մեծ, ճոխ շենքի ընդունարան դահլիճը։ Մեգարոնի գոյությունը Թեյշեբաինի քաղաքում խոսում է ուրարտական ճարտարապետական ձևերի հարստության և բազմազանության մասին։ Այն հանդիպում է նաև մեր ժողովրդական ճարտարապետության մեջ։

Զեկուցողը խոսեց ուրարտական ճարտարապետական լավագույն կոթողներից մեկի՝ սեկցիոն բնակելի շենքի մասին, նշելով, որ երկենտրոնական չորս սյունանոց դահլիճներից մեկը կենտրոնական երթիկային լուսավորությամբ, հանդիսանում է հայկական հազարաշենների նախատիպը և որ այս շենքն իր բազմաթիվ զուգահեռներն ունի հին արևելքի դասական ճարտարապետության մեջ։

Կ. Լ. Հովհաննիսյանն իր զեկուցման վերջում նշեց, որ հենվելով ուրարտական սյունազարդ շենքերի օրինակների վրա, կարելի է ասել, որ Աքեմենյան ճարտարապետությունը զարգացել է ուրարտականի ավանդներով։

Դվինի պեղումների արդյունքների մասին զեկուցեց պրոֆեսոր՝ Կ. Ղաֆադարյանը։ Ամփոփելով անցյալ տարիների պեղումների արդյունքները, զեկուցողը նշեց, որ 1961 թ. զգալի արդյունքներ են տվել Դվինի միջնաբերդի հյուսիսային մասի պեղումները։ Հայտնաբերված նյութերն ապացուցում են, որ պեղվող սենյակի ներքին հատակը Արշակունյաց թագավորության շրջանի է, միջին հատակը մարզպանական շրջանի, իսկ վերին հատակը կառուցվել է 893 թ. երկրաշարժից հետո։

Միջնաբերդի պեղումներում հայտնաբերվել են հեթանոսական շրջանի հուշարձաններ։ Պեղումներից հայտնաբերված շատ իրեր ապացուցում են, որ Դվինում զարգացած է եղել ապակեգործությունը, ակնագործությունը, ոսկերչությունը և այլն։ Հայտնաբերված կնքադրոշմները հաստատում են, որ Դվինում է եղել պետական դիվանը։ Գրավոր աղբյուրները ևս այդ են ապացուցում։

Միջնաբերդի պեղումների ժամանակ հայտնաբերված բազմաթիվ հնագիտական առարկաները նոր տեղեկություններ են տալիս միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի, արհեստների, առևտրի զարգացման և կենցաղի ու սովորույթների մասին։

Սևսիայում լսվեցին նաև Հայկական ՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Աղրբիջանական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի միացյալ վիմադրական արշավախմբի 1961 թ. աշխատանքների մասին Բարխուդարյանի, Լճաշենի բրոնզեդարյան ամրոցի և դամբարանների 1961 թ. պեղումների մասին՝ Հ. Մնացականյանի, Շենգավիթի էնեոլիթյան բնակավայրի 1961 թ. պեղումների մասին՝ Ս. Սարդարյանի և այլ զեկուցումներ։

Սևսիայում կարդացված զեկուցումները վկայում են 1961 թ. կատարած պեղումների նշանակալից ավանդը հայ ժողովրդի անցյալի պատմության ուսումնասիրության գործում։

ԷՄ. ԽԱՆԶԱԴՅԱՆ